ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

№ 10 - Լ

«05» 09 2023 թ. ք. Երևան

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ «ԹԵԺ ԳԻԾ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 5-Լ հրամանով հաստատված Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության կանոնադրության 22-րդ կետի 4-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել 010-36-77-25 հեռախոսահամարը որպես Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության «Թեժ գիծ»:

2. Հաստատել Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում «Թեժ գիծ» ծառայության գործունեության կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:

3. Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի պետին՝

1) «Թեժ գիծ» ծառայության սպասարկումը հանձնարարել Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի տեղեկատվության ապահովման և վիճակագրության բաժնի ամենօրյա ծառայություն իրականացնող փրկարարական ծառայողներին,

2) տասնօրյա ժամկետում իրականացնել «Թեժ գիծ» ծառայության սպասարկող անձնակազմի կողմից սույն հրամանի հավելվածով հաստատված կարգի իմացության ստուգում:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ Եգոր Աղվանի Կարապետյանին:

5. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ 05.09.2023թ.

Փ/Ծ ԳՆԴԱՊԵՏ Կ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

Հավելված
Ներքին գործերի նախարարության
փրկարար ծառայության տնօրեն-
ներքին գործերի նախարարի տեղակալի
2023 թվականի սեպտեմբերի 05-ի թիվ 10 -Լ հրամանի

ԿԱՐԳ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ «ԹԵԺ ԳԻԾ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) «Թեժ գիծ» ծառայությունը գործում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 9:00-ից 17:00-ն, ընդմիջման ժամը՝ 13:00-ից 14:00:

2. «Թեժ գիծ» ծառայության հեռախոսակապը ձայնագրվող է, որն իրականացվում է ինքնաշխատ սկզբունքով՝ ընդգրկելով խոսակցությունների ամբողջ ժամանակահատվածը՝ առանց ընդհատումների՝ կապի միջոցի աշխատանքային ռեժիմի անցնելու պահից (մուտքի/ելքի զանգից, եթերում՝ ձայնից), մինչև հանգստի ռեժիմին անցնելը (խոսակցության երկկողմանի ավարտը):

3. «Թեժ գիծ» ծառայության աշխատանքը ղեկավարում է ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԱԿ) տեղեկատվության ապահովման և վիճակագրության բաժնի (այսուհետ՝ ՏԱՎԲ) պետը, վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինող պաշտոնատար անձը, ով՝

1) կազմակերպում է «Թեժ գիծ» ծառայության գործունեությունը,

2) վերահսկում է «Թեժ գիծ» ծառայություն ստացված ահազանգերի ընդունման, գրանցման, արձագանքման, քննարկման, ամփոփման և ըստ վերադասության ներկայացման գործընթացը:

4. «Թեժ գիծ» ծառայությունում ստացված ահազանգը սպասարկում է ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ ՏԱՎԲ ամենօրյա ծառայություն իրականացնող փրկարարական ծառայողը:

5. Ահազանգը գրանցվում է սույն կարգով սահմանված Ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության «Թեժ գիծ» ծառայությունում ստացված ահազանգերի գրանցման և հաշվառման էլեկտրոնային մատյանում (Ձև 1) (այսուհետ՝ մատյան), որտեղ լրացվում են՝

1) ահազանգի գրանցման օրը և ժամը,

2) ահազանգողի անունը, ազգանունը, հեռախոսահամարը,

3) ահազանգի բնույթը և բովանդակությունը,

4) ձեռնարկված միջոցառումները,

5) ահազանգն ընդունողի պաշտոնը, կոչումը, անունը և ազգանունը:

6. Ահազանգը սպասարկողն իրականացնում է հետևյալ գործողությունները՝

1) **հարցում գրանցվելու դեպքում՝** հնարավորության սահմաններում տրվում է սպառիչ պատասխան, անհրաժեշտության դեպքում տրամադրվում է տվյալ հարցին առնչվող համապատասխան պաշտոնատար անձի ծառայողական (աշխատանքային) հեռախոսահամարը,

2) **բողոք, առաջարկ և շնորհակալություն գրանցվելու դեպքում՝** հետագա ընթացքը լուծելու համար, կազմվում է տեղեկանք և ուղեկցող գրությամբ ներկայացվում ըստ վերադասության:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված և լրացուցիչ քննարկման կարիք ունեցող ահազանգերի հետագա ընթացքն ապահովելու և լուծում տալու նպատակով, ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ ՏԱՎԲ պետը զեկուցում է ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ պետին (տեղակալին)՝ ներկայացնելով մինչ այդ ձեռնարկված միջոցառումները:

8. Սույն կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետում նշված ահազանգերի արդյունքների մասին քաղաքացին հնարավորության դեպքում տեղեկացվում է հետադարձ կապով, ինչի մասին մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

9. ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ ՏԱՎԲ պետը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը՝

1) յուրաքանչյուր աշխատանքային օրվա ավարտին ստացված ահազանգերի թվաքանակի, բնույթի և դրանց հետագա ընթացքի ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացնում է ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ պետին (տեղակալին),

2) յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը կազմում է նախորդ ամսվա ընթացքում «Թեժ գիծ» ծառայությունում ստացված ահազանգերի թվաքանակի, բնույթի, ինչպես նաև քննարկման արդյունքների և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ամփոփ տեղեկանք և ներկայացնում ըստ վերադասության:

10. ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ պետը «Թեժ գիծ» ծառայությունում ստացված զանգերի վերաբերյալ ամսական, կիսամյակային և տարեկան տեղեկանքները ներկայացնում է ՆԳՆ ոստիկանության շտաբ՝ ՀՀ կառավարության աշխատակազմ ուղարկելու համար:

Ձև 1

ՄԱՏՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ «ԹԵԺ ԳԻԾ» ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՍՏԱՑՎԱԾ ԱՀԱՋԱՆԳԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ

Հ/հ	Ահազանգը ստանալու		Ահազանգողի տվյալները, հեռախոսահամարը	Ահազանգի		Ձեռնարկված միջոցառումները	Ահազանգը ընդունող (պաշտոն, կոչում, անուն ազգանուն)
	օրը	ժամը		բնույթը	բովանդակությունը		